ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՆՈՆԸ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան գրականության և մշակույթի քննությունը վեր է հանում միևնույն թեմայի ու հասկացության համաժամանակյա զարգացումը և արտահայտումը գրականությունում, նկարչությունում և քանդակագործության մեջ:

Այս եռամիասնության մեջ դժվար է ասել Տերունական որևէ պատկերին նվիրված գանձերն ու շարականնե՞րն են համապատասխան ընկալում ստեղծում, որից ազդվում են նկարիչներն ու քանդակագործները, թե՞ արվեստի ստեղծագործությունն է հետո գրական ներշնչանքի աղբյուր դառնում:

Միջնադարյան ստեղծագործությունների համադրական քննությունը, սակայն, վկայում է, որ ոչ թե արվեստի գործերն են ազդում գրական ստեղծագործությունների վրա կամ հակառակը, այլ նրանք բոլորը սնվում են միևնույն աղբյուրից՝ ժամանակի ընդհանուր աշխարհայացքից և միջնադարյան մեկնաբանական ավանդույթից:

Դարերի ընթացքում մեկնաբանական ըմբռնումներին ու ժամանակի աշխարհայացքին զուգահեռ փոխվում են տարբեր թեմաներով նկարների պատկերային կառուցվածքը և նույն այդ թեմաներով գրված ստեղծագործությունների կոմպոզիցիան, որը ցույց է տալիս բանաստեղծական պատկերի և նկարչական պատկերի ձևավորման միևնույն՝ ընդհանուր ակունքով պայմանավորված լինելը:

Այժմ Աստվածահայտնության՝ Հորդանանում մկրտության օրինակով ցույց տանք, թե ավետարանական տվյալ դրվագն ինչ մեկնությունների է ենթարկվել, և թե այդ մեկնությունների հիման վրա նկարչական և գրական ինչպիսի պատկերներ են ձևավորվել:

Հովհաննես Մկրտչի քարոզության և Հորդանան գետում Քրիստոսի մկրտության մասին գրում են չորս Ավետարանիչները (Մատթ. Գ 1-17, Մարկ. Ա 1-13, Ղուկ. Գ 1-22, Հովհ. Ա 15-28): Քրիստոսի մկրտությունը հիշվում է նաև Պողոս առաքյալի՝ Հռոմայեցիներին (Զ 3) և Կորնթացիներին (Ա Կորնթ. Ժ 1-4) ուղղված թղթերում, ինչպես նաև Հովհաննեսի (Գ 1) Ընդհանրական թղթում:

Երկնքից հնչած և Հիսուսի աստվածությունը վկայող խոսքերի համար է, որ Քրիստոսի մկրտության հիշատակի տոնը եկեղեցին անվանում է Աստվածահայտնություն:

Մկրտության ժամանակ տեղի ունեցավ Աստվածահայտնությունը խորհրդանշող երեք հրաշք: Առաջին՝ բացվեց երկինքը և բացված երկինքը Հին Ուխտում խորհրդանշում է Աստծո միջամտությունը մարդկանց գործերին նրանց փրկության համար: Եսայու մարգարեության մեջ ասվում է. «Եթե բացես երկինքը, Քո ահից լեռները կսասանվեն և կհալվեն... Հնուց ի վեր չլսեցինք, որ Իր ողորմության վրա հույս դնողների համար այսպիսի բաներ աներ, ընդառաջ գնար նրանց, որոնք արդարություն են գործում և հիշում Քո ճանապարհները» (Եսայի 64. 1-5):

Երկրորդ՝ Հովհաննեսը և Հորդանանում մկրտվողները տեսան աղավնակերպ իջնող Սուրբ Հոգին:

Երրորդ՝ նրանք լսեցին երկնքից հնչած հայրական ձայնը:

Հորդանանում Հիսուսի մկրտությունը ներկայացնող պատկերների հիմքում ընկած է ավետարանական պատմությունը, որին ինչպես և Տերունական մյուս պատկերներին, լրացուցիչ դրվագներ են հավելվել եկեղեցական ավանդությամբ, քրիստոնեության առաջին դարերի տարբեր պատմություններով և մկրտության խորհրդի միջնադարյան ընկալումը ներկայացնող մեկնություններով:

Հորդանանում մկրտության պատկերներում կենտրոնում պատկերվում է մինչև ուսերը և կամ գոտկատեղը Հորդանանի մեջ ընկղմված Քրիստոս: Տիրոջ ձախ կողմում Հովհաննես Մկրտիչն է, իսկ աջում՝ մկրտվող Հիսուսին սպասավորող հրեշտակները: Գետում Հիսուսի շուրջը խայտացող ձկներ են՝ խորհրդանշելով փրկագնված հոգիները, իսկ ոտքերի տակ՝ հաղթված վիշապը, որի փոխարեն երբեմն պատկերվում է նաև Հորդանանի արքա անվանվող անձնավորությունը: Ափին ծառի կամ թփուտների մեջ խրված մի կացին է և վեր խոյացող խաչ, իսկ պատկերի վերին եզրագծից՝ կենտրոնում գտնվող Հիսուսի վրա է իջնում աղավնակերպ Սուրբ Հոգին:

Հորդանանում մկրտությունը որպես Աստվածահայտնության տոն Հայոց եկեղեցու Տոնացույցին մաս է կազմել չորրորդ դարից, իսկ ավետարանական այս դրվագին նվիրված առաջին մեկնությունը գտնում ենք արդեն հինգերորդ դարում՝ Եղիշեի՝ Քրիստոսի մկրտությանը նվիրված ճառում:

Նույնը վերաբերում է և այս թեմայի պատկերագրությանը, որի առաջին արտահայտությունը գտնում ենք 5-րդ դարով թվագրվող Օձունի սյան վրա: Այստեղ պատկերված է Հովհաննեսից մկրտվող և մինչև կուրծքը ջրի մեջ ընկղմված Քրիստոս, ինչպես նաև Հորդանանի խաչով սյունը:

Ինչպես Ծննդյան, այնպես էլ Հորդանանում մկրտության հայկական

հնագույն մանրանկարը էջմիածնի Ավետարանի (Երևանի Մատենադարան, ձեռ. հմ. 2374) վերջում գտնվող չորս մանրանկարներից մեկն է՝ վերջինը:

Այս մանրանկարում բացառիկ հնությունը աչքի է զարնում Քրիստոսի անմորուս պատկերմամբ: Քանի որ Ռաբուլայի Ավետարանում Քրիստոս մորուքով է, ուստի Ստրժիգովսկին եզրակացնում է, որ այս մանրանկարը ստեղծված պետք է լինի 580 թվականից՝ Ռաբուլայի Ավետարանի գրությունից առաջ:

Քրիստոս թեև մկրտվեց երեսուն տարեկանում, սակայն մի շարք դեպքերում այսպես պատկերվում է որպես անմորուս պատանի, որով վաղ շրջանի արևելաքրիստոնեական մշակույթում նման ձևով շեշտվում է, որ մկրտությունը, որպես հոգևոր ծնունդ, նոր կյանքի սկիզբն է[1]: Մկրտվողը լինի ծերունի թե երիտասարդ, նորից է ծնվում, որի համար Հիսուս Հորդանանում մկրտության պահին պատկերվում է ոչ թե ըստ տարիքի, այլ՝ համաձայն մկրտության հոգևոր խորհրդի:

Հորդանանում Հիսուսի՝ որպես մկրտությամբ հոգևորապես ծնվող պատանու և մկրտության, որպես չարչարանքների ու խաչելության նախասկիզբը լինելու ըմբռնումը արտացոլվել է և հաջորդող դարերի այս թեմայի պատկերագրությունում, որի համար թեև Հովհաննես Մկրտիչն ու Հիսուսը տարեկիցներ էին, և Հովհաննեսը Հիսուսից մեծ էր ընդամենը կես տարով, սակայն բոլոր մանրանկարներում Հովհաննեսը շեշտված կերպով տարիքով ավելի մեծ է երևում Հիսուսից:

Հայկական մանրանկարչության մեջ ինչպես մի շարք Տերունական պատկերների, այնպես էլ Մկրտության կանոնի պատկերագրական ամբողջացումը գտնում ենք Մուղնիի Ավետարանի սկզբի Տերունական պատկերաշարում: Մուղնիի Ավետարանի մանրանկարները առանձնանում են նաև իրենց գեղարվեստական արժանիքներով, կատարողական բարձր վարպետությամբ և կերպարների ու բնանկարի արտահայտչականությամբ:

Ըստ Ավետարանի «Հովհաննեսը, ուղտի մազից զգեստ ուներ և կաշվե գոտի՝ իր մեջքին, իսկ նրա կերակուրն էր մորեխ ու վայրի մեղր» (Մտթ. Գ 4) խոսքերի, նա պատկերվում է որպես մազախռիվ միայնակյաց մի անապատական:

Հովհաննեսի մարախով՝ մորեխով և մեղրով սնվելու մասին Ներսես Շնորհալին գրում է, որ մորեխը անարյուն ու երկնաթռիչ է, և նույն ձևով Հովհաննեսը մաքուր լինելով մարդկային կրքերից և ախտերից, լցված էր երկնային առաքինությամբ[2]: Նաև ուներ մեղրի քաղցրությունը, քանի որ անապատում ճաշակում էր աստվածային բարությունը համաձայն Դավիթ մարգարեի ասածի. «Քո խոսքերը իմ քիմքի համար ավելի քաղցր են, քան մեղրը» (Սղմ. ճԺԸ 103):

---

1 Տե՛ս Ս. Տեր-Ներսիսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1981, էջ 61:

2 Ներսես Շնորհալի, Մեկնութիւն Սուրբ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի է, Կ. Պոլիս, 1825, էջ 55:

Ժամանակի տարածված ըմբռնմամբ, մեսիայի գալստյանը նախորդելու էր կամ համընկնելու Եղիայի գալը, որն օծելու էր Մեսիային և հավաստելու նրա մեսիականությունը: Ահա այս պատճառով Հովհաննես Մկրտիչը նույնացվում էր Եղիայի հետ: Անգամ հրեշտակի՝ Զաքարիային տրված ծննդյան ավետիսում է ասվում. «Նա Եղիայի հոգով և զորությամբ պիտի գնա Նրա առջևից» (Ղուկ Ա 17):

Եղիան Հին Ուխտի անապատականն էր, իսկ Հովհաննեսը՝ Նորի և երկուսն էլ խարազանում էին կեղծիքն ու անարդարությունը: Ինչպես Անտիպատրոս Բոստրացին է գրում Հովհաննես Մկրտչի մասին, «...անապատի սննդակիցը, ով իր զգեստներով հեգնում էր պճնամոլներին»[1]:

Երբեմն Հովհաննեսը ներկայացվում է ձեռքում մկրտության կոնք՝ Մկրտչի իր առաքելության խորհրդանիշը:

Մկրտության տեսարանում Հովհաննեսը ներկայացվում է կա՛մ հայացքը երկինք հառած, ասես ունկնդիր Հայրական հնչած ձայնին, և կա՛մ էլ Քրիստոսին նայելիս և ձեռքը Փրկչի գլխին դրած:

Ավետարանում թեև ուղղակիորեն չի ասվում մկրտության ժամանակ Քրիստոսի գլխին Հովհաննեսի ձեռքը դնելու մասին, սակայն Հորդանանում մկրտությունը այսպես է ներկայացվում արդեն վաղ շրջանի եկեղեցական հայրերի գործերում և Մկրտության ծեսի ազդեցությամբ է, որ Հորդանանում Մկրտությունը այսպես է պատկերվում[2]:

Մկրտությամբ Տիրոջ դեպ խաչելությունն ընթանալն է խորհրդանշում Հորդանանի վրա պատկերվող խաչը, որը միաժամանակ հիշատակությունն է այն խաչի, որը կանգնեցված է եղել Հորդանան գետում, Հովհաննես Մկրտչին նվիրված տաճարի մոտ:

Ինչպես նշում է Ն. Կոնդակովը, քրիստոնեության վաղ շրջանից սկսյալ ուխտավորները ցանկացել են պատկերել և իրենց հետ որպես հիշատակ տանել Սուրբ վայրերի պատկերները, որի համար էլ Քրիստոսի կյանքի և հրաշագործությունների հետ կապված վայրերն ու տեսարանները տեղի վարպետները պատկերել են ուխտավորների համար պատրաստված հուշանվերների վրա[3]:

Այս հանգամանքը իր ազդեցությունն է ունեցել նաև Տերունական նկարների պատկերագրության վրա և Ծննդյան պատկերներում ներկայացվել է Բեթղեհեմյան այրը, Ս. Հարության նկարներում՝ Ս. Հարության տաճարի համապատասխան մասը Քրիստոսի գերեզմանի այրով: Նույնը վերաբերում է

---

1 Անտիպատրոս Բոստրացի եպիսկոպոսի խոսքը Տիրոջ մկրտության առթիվ, աշխ. վերածեց Ա. Ալեքսանյանը, Գանձասար, Ա, Երևան, 1992, էջ 36:

2 А. Майкапар, Новый завет в искусстве,/ Москва, 1998, стр. 111:

3 Տե՛ս Н. П. Кондакова, Иконография Богоматери, С. Петербург, 1914, том 2-ой, стр. 132.

նաև Հորդանանում պատկերված խաչին: Ինչպես գրում է Կոնդակովը, Հորդանանում պատկերվում է սյան վրա կանգնեցված այն խաչը, որը բարձրացվել է Հորդանանում Հովհաննես Մկրտչի վանքի մոտ[1]: Համանման ձևով Շիլլերը ասում է, որ 6-8-րդ դարերում Սուրբ երկիր այցելած ուխտավորներն են գրում, որ Հորդանանում խաչով մի սյուն է կանգնեցվել այն վայրում, ուր կատարվել է Մկրտությունը[2]:

Հովհաննես Մկրտչի՝ Հորդանանում մկրտվելու ժամանակ ասած «Կացինն ահա ծառերի արմատին է դրված, ամեն ծառ, որ բարի պտուղ չի տա, կտրվում է և կրակն է գցվում» (Մտթ. Գ 10) խոսքերի հետևողությամբ, գետի ափին ծառի բնի կամ թփուտների մեջ խրված մի կացին է պատկերվում:

Կացնի հոգևոր խորհրդի մասին միջնադարյան մեկնիչները գրում են, որ այն խորհրդանշում է թե՛ մեղքերի հատումը հենց արմատից, քանի որ ասվում է կացինը արմատին է դրված, և թե՛ Աստծու գթասրտությունը, որ հնարավորություն է տալիս ապաշխարելու, քանի որ չի ասում, թե կացինը արմատն է հատում, այլ կացինը ասես սպասում է, որ եթե մեղավորը ետ դառնա, չի հատի, իսկ եթե ոչ՝ արմատից կկտրի: Ինչպես Սարգիս Կունդն է գրում Ոսկեբերանից բանաքաղված հատվածում. «Եւ տե՛ս, զի ընդ սաստն և զմխիթարութիւնն խառն է: Թէպէտ և այնպէս մատոյց, սակայն զձեզ արար տեարս կտրելոյ և չկտրելոյ: Զի թէ դառնայք և լինիք պիտանիք, անցանէ և ո՛չ մեղանչէ ձեզ տապարն»[3]:

Նման մեկնաբանությամբ Աստված իրար միախառնված է ներկայացնում սպառնալիքը և մխիթարությունը: Մարդն իր պահվածքով ինքն է դառնում հատելու և չհատելու տերը, որ եթե ետ դառնա մեղքի ճանապարհից, չի իջնի և տապարը, իսկ եթե շարունակի մնալ չարի վրա հաստատված, ապա կհաջորդի արմատից հատումը:

Հորդանանում Մկրտությունը քրիստոնյա մեկնիչները համեմատել են հրեաների Կարմիր ծովն անցնելու հետ, հետևյալ զուգահեռով. Կարմիր ծովով անցնելը մարմնավոր փրկության ազատությունը բերեց Մովսեսի առաջնորդած ժողովրդին, իսկ Հորդանանում Մկրտությունը փրկություն բերեց մեղքերի գերությունից:

Ինչպես Կարմիր ծովով անցնողները հասան Ավետյաց երկիր, այնպես էլ մկրտությամբ Հորդանանն անցնողներն են արժանի դառնալու երկնքի արքայությանը:

Ինչպես Կարմիր ծովում փարավոնը խեղդվեց, այնպես էլ Հորդանան գետում մեղքի իշխանը՝ սատանան: Ինչպես որ ծովն էր Կարմիր կոչվում, այն-

1 Նույն տեղում:
2 G. Shillr, Iconography of Christian art, vol. 1, London, էջ 135:
3 Սարգիս Կունդ, Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու, Ս. Էջմիածին, 2006, էջ 121:

պես և Հորդանանը խորհրդանշող ավազանի ջուրն էր կարմիր, Քրիստոսի թափված արյամբ:

Կարմիր ծովում խեղդված փարավոնի և Հորդանանում մկրտությամբ փրկության զուգահեռով գետում Հիսուսի շուրջը պատկերվում են խայտացող ձկները, իսկ ոտքերի տակ կծկված կամ օձագալար մարմնով հանգույց եղած վիշապը՝ սատանան: Ձկները խորհրդանշում են Հիսուսի մկրտությամբ փրկված հոգիները, քանի որ Ավետարանում ձկներ են անվանվում մարդկային հոգիները, իսկ այդ հոգիների որսորդ առաքյալները՝ ձկնորսներ:

Վիշապն էլ պարտված սատանային է ներկայացնում: Դավթի սաղմոսներում նաև ասվում է.

Դու քո զորությամբ ծովը հաստատեցիր
Եվ վիշապների գլուխը խորտակեցիր:

Թարգմանչաց Ոսկեդարյան շրջանի հեղինակներից Մամբրե Վերծանողը գրում է. «Զծովասոյզ վիշապին զինուորութիւնս շնչահեղձոյց մեռացուցանէր ի մկրտութեան ջուրս»[1]:

8-րդ դարի եկեղեցական մատենագիր և կաթողիկոս Զաքարիա Զագեցին Քրիստոսի մկրտությանը նվիրված ճառում Հիսուսի անունից ասում է. «Իջի սպանանելն զգազանն կամակոր. ջրով սատակեմ զկորուսիչն մարդկան, իջի փշրել ի վերայ ջուրց գլուխ կամակոր վիշապին: Կոխեմ ի հոսանսն Յորդանանու զվիշապն պերճացեալ»[2]:

Մանրանկարներում վիշապի փոխարեն երբեմն պատկերվում է Հորդանանի արքա անվանվող կերպարը, որն անբնական դիրք ունի և սատանայի գեղարվեստական կերպավորումներից մեկն է:

Նրա դիրքի անբնականությունը և ոչ պատշաճությունն արտահայտվում է նրանով, որ ի տարբերություն իրենց հայացքը Հիսուսին հառած մյուս կերպարների, նա շրջված դիրքով է և պատկերային արտահայտությունն է սաղմոսի «Հորդանանը հետ դառավ» տողի:

Որ Հորդանանի արքան սատանայի համարժեքն է, պատկերագրորեն հավաստվում է նրանով, որ նա հանդես է գալիս մկրտության այն մանրանկարներում և այնտեղ, ուր սովորաբար վիշապն է պատկերվում:

Պոկրովսկին գրում է, որ նա Հորդանանի անձնավորումն է և նրա պահած սափորից հոսող ջուրն է կազմում Հորդանան գետը[3]:

Մկրտություն-չարչարանք զուգահեռով դժոխքի ավերման և մկրտութ-

1 Մատենագիրք Հայոց, հտ. Ա, Անթիլիաս, 2003, էջ 1136:
2 Զաքարիա Զագեցի, ճառք, աշխտ. Հ. Պ. Անանյանի, Վենետիկ, 1998, էջ 53:
3 Н. Покровский, Евангелие в памятниках иконографии, стр. 164:

յան մանրանկարներում պատկերների լեզվով այն միտքն է հայտնվում, որ մկրտությամբ սատանայի զորությունն ի չիք դարձավ Հորդանանում, իսկ խաչելությամբ՝ դժոխքի ավերման ժամանակ:

Սատանայի՝ Հորդանանում ջախջախվելը և մկրտվողների փրկությունը Զագեցին ներկայացնում է ջրհեղեղի հետ տարվող զուգահեռով, թե ինչպես ջրհեղեղը կործանեց մեղավոր երկիրը, ջրի տակ թողնելով աշխարհում ծավալված մեղքը, այնպես էլ Հիսուսի մկրտությամբ Հորդանանի ջրերում ընկղմվեց մեղքի վիշապը և ինչպես մարդկանց հետ Աստծո խաղաղության ու հաշտության նշանը դարձավ աղավնու բերած ձիթենու ճյուղը, այնպես էլ մկրտության ժամանակ Աստծո մարդկանց հետ հոգևոր որդեգրությամբ նոր ուխտը հաստատվեց դարձյալ աղավնակերպ իջած Սուրբ Հոգով[1]:

Նման զուգահեռով միջնադարյան մանրանկարչությունում պատկերների լեզվով ընդհանրացված ձևով արտահայտվում է հետևյալ միտքը. մկրտությունը հոգևոր ծնունդ է: Ինչպես մարդը ֆիզիկապես ծնվում է մայրական արգանդից, այնպես էլ հոգևորապես եկեղեցու ավազանից, որի համար Զագեցին գրում է, թե Սուրբ Հոգին իջնում է աղավնակերպ, որպեսզի Հորդանանը դարձնի մկրտության ավազան մարդկանց փրկության և նոր կյանքի համար:

Համանման զուգահեռով, ինչպես ջրհեղեղի ջրերից հետո Նոյի միջոցով մարդկությունը ֆիզիկապես փրկվեց աղավնու բերած ձիթենու ճյուղով, այնպես էլ Հորդանանի ջրերում հոգևորապես փրկվեց աղավնակերպ Սուրբ Հոգու իջմամբ[2]:

Ավետարաններում թեև հիշատակություն չկա մկրտության ժամանակ հրեշտակների ներկայության մասին, սակայն նրանք, որպես Աստծո սպասավորներ, ինչպես որ ներկա են Քրիստոսի կյանքի գլխավոր շատ դրվագներում, այնպես էլ այս պատկերներում Քրիստոսի աջ կողմում: Այլ դեպքերում, սակայն, եթե նրանք փառաբանող հրեշտակներ են, այստեղ սպասարկող, և սպասավորում են մկրտվող Հիսուսին: Այս պատճառով նրանց ձեռքերին մկրտության ժամանակ անհրաժեշտ սրբիչներ, հանդերձներ և յուղի սրվակներ են:

Հրեշտակները հավաքաբար կարող են ներկայացվել մեկով և կամ էլ պատկերվել մի քանիսով: Նրանք Հիսուսին սպասավորում են կա՛մ գետի ափին կանգնած և կա՛մ էլ համաձայն իրենց երկնային բնույթին՝ վերևից դեպի երկիր թեքված: Ինչպես Ավետման մանրանկարներում Գաբրիել հրեշտակի, այնպես էլ այստեղ նրանց երկնային և հրեղեն լինելն է խորհրդանշում մազերի բացվածքի կենտրոնի կրակե բոցեղեն լեզվակը:

---

1 Զաքարիա Զագեցի, ճառք, էջ 55:

2 Н. Покровский, նշվ. աշխտ., էջ 183:

Ինչպես գրում է Պոկրովսկին, սրբիչով և ծածկոցով սպասավորող հրեշտակները մկրտության մանրանկարներում խորհրդանշում են կնքահայրերին, ովքեր վաղ քրիստոնեական շրջանից սկսած մկրտության ժամանակ ընդունել և գրկել են ավազանից հանվող մկրտյալին և փաթաթել մաքուր սրբիչով և ծածկոցով: Կնքահոր պարտականությունը կատարել են նաև սարկավագները:

Մկրտության թեման և նրա վրա խարսխված մանրանկարները նշանավորվում են նաև նրանով, որ առաջին անգամ նրանցում է Սուրբ Երրորդությունը պատկերվում երեք անձերով՝ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: Մանրանկարի կենտրոնում գտնվող Հիսուսի գլխավերևում՝ երկնքում, Հայրական աջն է, որից բխում և Հիսուսի վրա է իջնում աղավնակերպ Սուրբ Հոգին, համաձայն «Դա է Իմ սիրելի Որդին» խոսքերի:

Աստծո ձեռքը, լույսի ճառագայթները, որոնք իջնում են Հիսուսի վրա երկնքից և աղավնուց, ավելի են ընդգծում Մկրտության տեսարանի աստվածահայտնության բնույթը:

Հայրական Աջից այս լուսագծով վայր իջնող և Հիսուսի վրա հանգչող Սուրբ Հոգին տարածական միևնույն հարթության վրա իրար է կապում Հայր Աստծուն և Որդուն, խորհրդանշելով միասնական և անբաժանելի Սուրբ Երրորդությունը:

Այսպիսով այն միտքն է շեշտվում, որ Հորդանանում մկրտության ժամանակ հայտնվեց Երրորդության ծածկյալ խորհուրդը Հոր ի վերուստ վկայելով, Որդու մկրտությամբ և Սուրբ Հոգու աղավնակերպ իջմամբ:

Ավետարանի և մեկնաբանական գրականության վրա խարսխված պատկերագրական կանոնիկ այս կառուցվածքը իր համարժեք արտացոլումն էր գտնելու նաև Աստվածահայտնությանը նվիրված գանձերի ընդհանուր կոմպոզիցիոն և պատկերային կառուցվածքում, դառնալով միջնադարյան մեկնությունների գեղարվեստական արտահայտությունը հոգևոր բանաստեղծությունում:

Ս. Ծննդյան ութօրեքի առաջին օրվա գանձը, որը ծայրակապ և հեղինակի անվան խորագրային ու լուսանցային որևէ նշում չունի, նվիրված է Աստծո Որդու ի խնդիր մարդկության փրկությանը աշխարհ գալուն: Հորդանանում մկրտությունը քանի որ ջրհեղեղի նման մաքրեց, հոգևորապես լվաց Հորդանանը և աշխարհը, ուստի այստեղ մանրամասն ներկայացվում է աշխարհի արարումը, ապա Քրիստոսի աշխարհ գալը, ըստ այդմ և ջրհեղեղից հետո աշխարհի վերստին մաքրվելը մեղքից:

Այս գանձի տաղը արդեն ուղղակիորեն նվիրված է Հորդանանում մկրտությանը և ունի հետևյալ վերնագիրը՝ «Ջրաւրհնեացն առաւաւտին տաղ»: Փարիզի հմ. 80 և հին Գանձարանների մեջ իր ընդգրկունությամբ առավել ամբողջական եղող հմ. 7785 ձեռագրում նրա համար թեև ասվում է, որ տաղն է

«Տեառն Ներսիսի կաթողիկոսի», մի շարք ձեռագրերում էլ այն խորագրված է որպես Նարեկացունը և լեզուն իրապես նարեկյան դժվարախրթին գրաբարն է և ոչ թե շնորհալիական վճիտ պարզությունն ունի: Ա. Քյոշկերյանը այս տաղը զետեղել է Նարեկացու գործերի շարքում[1]:

Այն սկսվում է Նարեկացուն բնորոշ ավետիսներով, թե Աստվածահայտնությունը ավետիսն է մեծ խորհրդի, մեզ հայտնված ծածկյալ խորհրդի.

Ավետի՛ս, մեծ խորհրդոյ
Խորհուրդ ծածկեալ մեզ յայտնեցաւ[2]:

Քրիստոս անվանվում է Հոր էությունից ծագած լույսը:

Ավետիսների շարքը սկսվում է Գաբրիել հրեշտակապետի՝ Մարիամին տրված ավետիսով, ապա շարունակվում Ադամի տանը՝ մարդկությանը տրված ավետիսով:

Աստծո Որդու էջքը, մարդեղանալը Ս. Կույսից և Հորդանանում մկրտվելը ներկայացվում է որպես լույսի ծավալում, Ծննդյան և մկրտության ժամանակ ծավալված լույսի հետևողությամբ: Անհրաժեշտ է նշել, որ լույսի ծավալման նարեկացիական տողերը հիշեցնում են Միածնի էջքով Վաղարշապատի Կաթողիկեի հիմնման մասին Ագաթանգեղոսի հետևյալ տողերը. «Եւ լոյսն հոսեալ ի վերուստ ի վայր [...] Եւ ըստ նմանութեան *մանրամաղ փոշւոյ հիւղէի* [...] *լուսնացոյց երդոցն ի շողսն* խաղասցէ բազմութիւն *մանրամաղ փոշւոյն*»[3]:

Համանման ձևով Նարեկացին գրում է.

Հուպ երրակի լոյս գերազանց,
Լուսոյն արփի վեհինաձեմ,
Սեռիցն ընթաց բիւրուցն իջեալ
Շողշողենի, փողփողենէջ,
Մանրահիւղի, գաղտնի շաւիղ (Գնձ., հտ. Ա, էջ 51):

Այս տաղը քանի որ նվիրված է ջրի օրհնությանը և ունի Հորդանանում մկրտության հիշատակը եղող այս օրհնությամբ երկրի ջրեղեն տարերքի մաքրումը, ուստի բնությունը ներկայացվում է կանաչագեղ և պայծառ մի փարթամությամբ: Անհրաժեշտ է նշել, որ բանաստեղծական այս տողերը նա-

1 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, աշխտ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1981, էջ 66:
2 Գանձարան, հտ. Ա, աշխտ. Վ. Դևրիկյանի, Մատենագիրք Հայոց, ԺԳ հտ., Անթիլիաս, 2008, էջ 51 (Այս հատորից կատարված մեջբերումների էջերը այսուհետև կներկայացնենք մեջբերման վերջում):
3 Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, աշխտ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 414:

ռեկացիական արվեստի արտահայտությունը լինելով, միաժամանակ հիմնված են Բարսեղ Կեսարացու Զրօրհնյաց քարոզի այն հատվածի վրա, որում ասվում է, թե Հորդանանում մկրտությամբ և վերջինիս վրա հիմնված Զրօրհնյաց հանդեսով՝ «Այսօ՛ր երկինք զցօղ շնորհաց ցնծութեամբ վերացօղեն. և ծագի այսօր արեգակն անէղջ՝ աշխարհս ամենայն լուսով ճառագայթի»[1]:

Այսօր-ների շարքը ներկայացնում է երկրի ծաղկելը և պայծառանալը: Այս շարքին համահունչ ձևով Նարեկացին գրում է.

Աւետիս ծառոց ծաղկանց՝
Բողբոջախիտ, խիտասաղարթ,
Գոյն գեղեցիկ, պտղինաւէտ,
Ակնահաճոյ, համ քաղցրունակ... (Գնձ. հտ. Ա, էջ 52):

Հաջորդ տանը ավետիս է տալիս Հովհաննեսը և ***Յորդանան*** բառի հետ համահունչությամբ նույն ձևով ասում է.

Յորդ աղբերաց, հոյլ վտակաց
Զուր մանուածոյ ծիծաղ ծաւալ...

Հաջորդ տան ավետիսը արդեն ուղղված է Հորդանանին, քանի որ այնտեղ մկրտվելու է գալիս Քրիստոս: Ապա ինքն իրեն ավետիս է տալիս Հովհաննեսը, իր կատարած մկրտությունը ներկայացնելով որպես ձեռնադրություն.

Զեռն իմ զՏէրն իմ ձեռնադրէ:

Վերջին տանը տրվում է չորս ավետիս: Առաջին, որ հայրական ձայնը հնչեց բարձունքից, երկրորդ, որ Որդին եկավ մկրտվելու, երրորդ, որ աղավնակերպ Սուրբ Հոգին իջավ և վերջապես չորրորդ՝ որ այս երեքով մեզ հայտնվեց Սուրբ Երրորդության խորհուրդը:

Բանաստեղծական այս տունը ևս հարազատորեն վերարտադրում է Մկրտության պատկերագրական այն կառույցը, ուր վերևում Հայրական ձայնը խորհրդանշող Աջն է իջնող աղավնակերպ Սուրբ Հոգով և Հորդանանում մկրտվող Հիսուսով:

Այս կանոնի հաջորդ տաղի համար ասվում է, որ այն կատարվում է նույն օրվա երեկոյան: Այս տաղը ունի հետևյալ խորագիրը. «Տաղ նմին աւուր երեկոյին ի Ներսիսէ կաթողիկոսէ ասացեալ»[2]:

---

1 Ճաշոց գիրք Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1872, էջ 16:
2 Գանձարան, հտ. Ա, էջ 55:

Նախորդ տաղը մի շարք դեպքերում Շնորհալուն վերագրելը թերևս կատարվել է այն պատճառով, որ երեկոյան արարողության համար նախատեսվածի հեղինակը Շնորհալին է և վերնագրում ասվում է. «Տաղ նմին աւուր երեկոյին»: Այս նմին-ը վերաբերում է կատարման օրվանը, թե այն այդ օրվա երեկոյան կատարվող տաղ է: Մի շարք ձեռագրերի գրիչները, սակայն, ըստ երևույթին նմին-ը կապել են խորագրի առաջին բառի՝ տաղի հետ, որով այն ընկալվել է որպես դարձյալ Շնորհալու տաղ, այսինքն՝ առաջին տաղի հեղինակը Շնորհալին է և այս երկրորդը դարձյալ նրանն է:

Այս տաղը նվիրված է Ծննդյանը, իսկ փոխ-ը՝ մկրտությանը, և ասվում է, որ Քրիստոս երկնքից երկիր խոնարհվելով, Հորդանան գետում սրբեց, մաքրեց Ադամի հանցանքը:

Մկրտության ավետարանական պատմության և միջնադարյան նկարների պատկերագրական մի անդրադարձն է նաև Շնորհալու նկարագրությունը.

Ի վերուստ իջեալ Հոգին նման աղաւնոյ,
Երկնիցն բացան դրունք, Հայր յայտնեալ ցուցաւ.

Աղաղակելով գոչէր. «Դա է իմ Որդի,
Յինէն առաքեալ յերկիր, Դմա լուարուք» (Գնձ. հտ. Ա, էջ 57):

Ս. Ծննդյան առաջին օրվա ներքո բերված է նաև Հորդանանում մկրտության ծավալուն գանձը, որը գրված լինելով ավելի վաղ, քարոզ է անվանվում: Այս քարոզ գանձի հեղինակն է Հովհաննես Սեբաստացին: 18 վանկանի տողերով և 14 տողանի 14 տներով այս գանձը իր ծավալներով նմանը չունի և իրապես հիշեցնում է հին քարոզները, մի զուգահեռ գծելով հատկապես Բարսեղ Կեսարացու Զրօրհնյաց քարոզի հետ:

Առաջին տունը նվիրված է Քրիստոսի՝ Ս. Կույսից ծնվելուն, իսկ երկրորդ տանը Նիկիական հանգանակի ու աստվածաբանական տարբեր բանաձևերի հետևողությամբ շեշտվում է մարդեղացած Քրիստոսի աստվածությունը: Աստվածային և մարդկային բնությունների անշփոթ միախառնումը ներկայացված է հետևյալ ձևակերպումներով.

Ոչ ի յերկուս բնութիւնս բաժանի, այլ միացեալ մի անքակտելի,
Խառնումն ընտիր եւ անշփոթելի, սերտ միութիւն անբաժանելի,
Ոչ ոմն մարդ յատուկ դաւանի եւ ոմն Աստուած երկրպագելի,
Մի մարդացեալ Աստուած ճանաչի, Աստուած մարմնովն երկրպագելի:
(Գնձ. հտ. Ա, էջ 61)

Երրորդ տնում արդեն ներկայացվում է Հորդանանում մկրտությունը և այն համարվում է մեղքերը ջնջող երկրորդ ջրհեղեղ:

Մկրտութեան ջուրքն լուսաւոր, զհեղեղ մեղացն արար գլխակոր:
(Գնձ., հտ. Ա, էջ 62)

Չորրորդ տունը կառուցված է Տիրամայր-Անկեզ մորենի զուգահեռի վրա: Նույն ձևով հաջորդ տան մեջ Տիրամայրը համեմատվում է անփուտ տապանակի հետ:

Այս քարոզ-գանձում միջնադարյան տոմարական տարբեր հաշվարկների թվարկմամբ այն միտքն է շեշտվում, որ Քրիստոս երեսուն տարեկանում Հորդանան եկավ մկրտվելու նույն այն օրը, երբ մարմնով ծնվեց Ս. Կույսից.

Ի նոյն ամին ի վեցն յունվարին, ի վեցերորդ աւուր յուրբաթին
Ծնար մարմնով զԲանն եղեալ մարմին, որով եղեն գոյք բոլորովին
Եւ ի լրման երեսուն ամին, Յիսուսդ ի նոյն վեցն յունվարին,
Յաւրն անդրանիկ Միաշաբաթին, գայ մկրտի աջով Մկրտչին
(Գնձ., հտ. Ա, էջ 64):

Հաջորդ տան մեջ եկեղեցական ավանդույթին նվիրականություն հաղորդելով, երկու տոների նույն օրը կատարելու համար ասում է, որ այն ավանդվել է Հակոբոս Տյառնեղբոր և հաստատվել Կյուրեղ Երուսաղեմացու կողմից:

Ինչպես որ այս գործը շեշտված դավանաբանական ուղղվածություն ունի և միտված է Հայոց դավանանքի ու ծեսի պաշտպանությանը, այնպես էլ քարոզի բարեխոսական հայցվածը նույն ոգին ունի: Հեղինակը՝ Հովհաննես Սեբաստացին, Տիրամորը դիմելով հայցում է, որ եկեղեցին պահի իր միության մեջ և մերժի հերձվածողությունը.

Պահեա սիրով միաբանական, զեկեղեցի սուրբ յանդորրութեան,
Հերքել ի մէնջ զմարտն հոգեկան, եւ զմեքենայս չարեաց մարմնական,
Այրել զարմատն հերձուածողական, զմարդապաշտից կարծիքն
ուրուական:

Մարդապաշտ, մարդադավան սովորաբար անվանվում էին նեստորականները, ապա, Քաղկեդոնի ժողովից հետո, այն ընդունողները: Այս գանձ-քարոզում դավանական հարցերը նման սրությամբ են արծարծվել, քանի որ Հովհաննես Սեբաստացին լինելով Ղրիմի առաջնորդը, պայքարել է ջենովացիների, և ընդհանրապես՝ Ղրիմում եղող կաթոլիկների դեմ, ովքեր աշխատե-

լով հայությանը դավանափոխ անել, հասել էին որոշակի հաջողությունների, վրդովելով և փոթորկելով համայնքների կյանքը:

Հմ. 7785 ձեռագրում Ծննդյան հինգերորդ օրվա համար բերված է Ներսես Շնորհալու մեկ այլ տաղը թեմատիկ և ձայնային ելևէջումներով:

Տաղի բանաստեղծական ընթացքը ներկայացվում է յուրաքանչյուր նոր միտք *Այսօր* բառով սկսելով, որին հաջորդում է տվյալ հատվածի ասելիքը: Կառուցվածքային առումով այս տաղը բաժանվում է յոթ մասի, որոնցից յուրաքանչյուրը նման է Ս. Ծննդից մինչև Աստվածահայտնությունը հասնող դրվագներին, որոնց իրար հաջորդելը ուղեկցվում է և եղանակի փոփոխությամբ, ինչպես որ յուրաքանչյուր նոր բաժին, որը նաև մի դրվագի մյուսին հաջորդելն է ներկայացնում, ունի «Այլ ազգ» խորագիրը: Նման նշումը ցույց է տալիս ձայնեղանակի փոփոխությունը:

Առաջին բաժնում ընդհանուր ցնծություն է հայտնվում Քրիստոսի ծննդյան համար: Երկրորդ բաժինը ներկայացնում է Գաբրիել հրեշտակապետի՝ Մարիամին տված ավետիսը: Երրորդ բաժնում Ս. Ծննդյան ուրախությանը մասնակից են դառնում մարգարեները իրենց կանխասացություններով: Չորրորդ բաժնում ավետիս է տալիս Հովհաննես Մկրտիչը և նրա ավետիսը Հորդանանում ապաշխարության կոչելու ավետարանական խոսքերի վերաշարադրանքն են:

Հովհաննեսը դիմում է Հորդանանին, որ ինքը ևս ուրախակից դառնա տոնին.

Իսկ դու ցնծա, գետ Հորդանան:

Ս. Ծննդի և Աստվածահայտնության շարքը քանի որ ավարտվում է անապատում փորձությամբ, ուստի հաջորդ դրվագներում ներկայացնելով Քրիստոսի մկրտությունը և հայրական ձայնի հնչումը, Շնորհալին տաղն ավարտում է Քրիստոսի՝ անապատում փորձությանը նվիրված բաժնով:

Եկեղեցական օրացույցի իրար հաջորդող տոնական երկու մեծ շարքերն են Ս. Ծնունդը և Ս. Հարությունը: Վերջինս քանի որ հաջորդում է Ծննդյանը և ունի նախորդող Մեծի Պահոց շրջանը, ուստի տոնախոսական բնույթի այս ստեղծագործությունը ասես եզրափակելով Աստվածահայտնությունը, անցում է կատարում պահքին, քառասնօրյա պահքի շրջանը զուգահեռի մեջ դիտելով անապատում քառասնօրյա պահեցողության հետ:

Նաև քանի որ սահմանված առաջին պահքը համարվում է Ադամին տրված պատվերը դրախտի պտուղը չճաշակելու, ուստի դրախտից վտարումը համարվում է՝ հետևանք այս առաջին պահքը չպահելու: Ադամ-Քրիստոս, որպես երկրորդ Ադամ, զուգահեռով ասվում է, որ Ադամը եթե հաղթվեց օձից

և վտարվեց դրախտից, ապա Քրիստոս հաղթեց սատանային՝ քառասնօրյա պահեցողությամբ բարձրացնելով անկյալ Ադամին.

Այսաւր Հոգւովն ել յանապատ
Տէրն՝ փորձիլ ի փորձողէն:
Այսաւր երկրորդ Ադամ պահեալ
Պարտեաց զյաղթող հնոյն Ադամայ:
Այսաւր պահաւք քառասնաւրեայ
Կանգնեաց զանկեալն ճաշակմամբ:
(Գնձ., հտ. Ա, էջ 132)

Նույն այս զուգահեռով անապատում սատանայի պարտությունը համարվում է օձի ջախջախումը:

Հմ. 8251 ձեռագրում Ծննդյան երկրորդ օրվա ներքո դրված գանձի տաղը նվիրված է Աստվածահայտնությանը և կառուցված է իմաստապատկերային այն հակադրության վրա, թե Տերը գալիս է մկրտվելու Իր ծառայից, որը ուղղակիորեն համահունչ է Հովհաննեսի՝ Հիսուսին ուղղված «Ինձ պիտո է Քէն մկրտել՝ եւ դու առ իս գաս» (Մտթ. Գ 14-15): խոսքերին, որոնց հետևողությամբ տաղում ասվում է.

Կամէր մկրտիլ ի ծառայէն Իւրմէ,
Չառնոյր Կարապետն զմկրտիլն ի յանձն:
(Գնձ., հտ. Ա, էջ 122)

Հովհաննեսի երկնչելուն ի պատասխան Հիսուս Ասում է. «Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն» (Մտթ. Գ 15): Հմ. 7785 ձեռագրում տեղ չգտած, սակայն հմ. 8251, 5328 և մի շարք այլ ձեռագրերով վկայված Գանձարաններում Ծննդյան երրորդ կամ հինգերորդ օրվա ներքո դրվող Խաչատուր Կեչառեցու գանձում ոչ միայն Հովհաննեսի երկնչելն է ներկայացվում, այլև Հիսուսի պատասխանը որպես բանաստեղծական մի երկխոսություն, ուր Հովհաննեսը ահով լցված հարցնում է Հիսուսին, թե ինչպես կարող է Նրան մկրտել, իսկ Հիսուս պատասխանում է, որ հարկավոր է այդպես վարվել.

-Տէր իմ, Քեզ պարտ է զմեզ մկրտել եւ Դու առ իս գաս իբրեւ անցնել
Ասէր, թե՝ թոյլ տուր այսպէս լինել, զի կտարի փրկութիւն ընտրեալ:
(Գնձ. հտ. Ա, էջ 138)

Ինչպես մանրանկարներում Հորդանանի հատակում ջախջախված վիշապն է, իսկ Երկնքից Երկիր տարածվող ընթացքով ներկայացվում է Սուրբ Երրորդությունը, այնպես էլ այս գանձի հաջորդ տան իրար հաջորդող հետևյալ տողերում ասվում է.

Ուստի ի ջուրս Տէր ընթացեալ եւ զվիշապին գլուխն ջախելով,
Դրունքն բացան երկնից ապահով, առագաստիւն վերնայարկով,
Եւ Հայր Որդի զնա կարդալով, իւր համակից առեցեալ մարմնով,
Հոգին իջեալ աղաւնաձեւով, ի կենդանութիւն զմեզ վերածնելով:

Այսպիսով, Մկրտության պատկերների օրինակով կարող ենք ասել, որ Տերունական նկարների պատկերագրական հորինվածքը և այս թեմայով գանձերի բանաստեղծական կոմպոզիցիան ունեն միևնույն կառուցվածքը, որը ոչ այնքան միմյանցից փոխազդեցությամբ է պայմանավորված, որքան երկուսի միևնույն մեկնաբանական ակունքներից գալով, և մեկնողական այս աղբյուրները նրանցից յուրաքանչյուրում ներկայացվել են գեղարվեստի իրենց բնորոշ միջոցներով, իրար սակայն զուգահեռ ընթանալով պատկերային նույն կառուցվածքով և բանաստեղծական պատկերի նույնանման կոմպոզիցիայով: